ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 2018/1
ԼՐԱՑՈՒՑԻՉ

ք. Երևան «06» օգոստոսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գլխավոր քարտուղար Վ. Մելիքյանի, որը գործում է ՀՀ ԱԳՆ կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Կապալառու», ի դեմս տնօրեն Ս.Գրիգորյանի, որը գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ հաշվի առնելով «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասը, ըստ որի «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիրը հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի» հավելվածը, ինչպես նաև այն, որ Կապալառուն «Պետական կարիքների համար աշխատանքների կատարման կապալի մասին» ՀՀ արդարադատության նախարարության հետ կնքած 2000թ. օգոստոսի 11-ի պայմանագրի համաձայն իրականացնում է «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» հրատարակումը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. 2007թ. հունիսի 29-ին կնքված պայմանագրի 2.1.1 և 4.1 կետերը շարադրել.

2.1.1. Պատվիրատուի հանձնարարությամբ հրատարակել Տեղեկագիրը՝ 125 օրինակ տպաքանակով՝ յուրաքանչյուր լեզվով (հայերեն, անգլերեն):

4.1 Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 7910000 (յոթ միլիոն ինը հարյուր տասը հազար) դրամ (ներառյալ բոլոր հարկերը), մեկ մամուլի միջին գինը՝ 140 դրամ, որը որոշված է կողմերի համաձայնությամբ և ներառում է ընկերության միջոցներով կատարված նախատպագրական (թղթե կրիչների վրա տրամադրված միջազգային պայմանագրերի էլեկտրոնային տարբերակների կազմումը, պայմանագրերի բնօրինակների հաստատված պատճենների համադրումը դրանց էլեկտրոնային տարբերակների հետ, տրամադրված տեքստերի հայերեն և օտարալեզու տեքստերի համադրումը և պայմանագրերի հայերեն և օտարալեզու տեքստերի սրբագրումը, համակարգչային մակետի կազմում, շուտիպի պատրաստում) և այլ աշխատանքների գինը և առաքման ծախսերը՝ հաշվի առնելով, որ պայմանագրերի հրապարակման ներկայացված ծավալը չի գերազանցելու մեկ համարի համար տարեկան 226 տպագրական մամուլը (1808 էջ):

Պատվիրատուն Կապալառուին իր կատարած աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ դրամական միջոցներ Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ համաձայն բյուջեով հաստատված եռամսյակային համամասնությունների

սահմանաչափի: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

4.2 Կողմերի համաձայնությամբ Տեղեկագիրը հրատարակվում է յուրաքանչյուր կիսամյակի համար:

2. Եզրափակիչ դրույթներ

Սույն Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, 2 օրինակից և հանդիսանում է 29.06.2007թ. կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ՀՀ արտաքին գործերի նախարարություն ք. Երևան, Հանրապետության Հրապարակ Կառավարության շենք թիվ 2 Բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/հ 900011196202 ՀՎՀՀ 02527728	ԿԱՊԱԼԱՌՈՒ «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ ք. Երևան, Տիգրան Մեծի 4 Հայէկոնոմբանկ Հ/հ 163008203131 ՀՎՀՀ 02538276
Գլխավոր քարտուղար՝ Վ.Մելիքյան	Տնօրեն Ի.Դոնիգոդյան